ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՋՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2019թ. թիվ 34

## ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով ` Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է`
Հաստատել Ազնվաձոր համայնքի ավագանու 2019թ.-ի դեկտեմբերի 17 -ի նիստի օրակարգը:

Օրակարգ

- Ազնվաձոր համայնքի 2019թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բարխուդարյան Մառլեն | [signature] | | |
| Դավթյան Սեյրան | [signature] | | |
| Հովակիմյան Նվեր | [signature] | | |

Համայնքի ղեկավար` [signature] Ն.Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2019թ. թիվ 35-Ն

### ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<ՏԻՄ>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,<<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3 ենթակետով՝ Ազնվաձոր համայնքի ավագանին

Որոշում է.

Ազնվաձոր համայնքի ավագանու 2019թ դեկտեմբերի 17-ի << ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին>> թիվ 28-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-6 հատվածների:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բարխուդարյան Մառլեն | [signature] | | |
| Հովակիմյան Նվեր | [signature] | | |
| Դավթյան Սեյրան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature, stamp] Ն.Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 դեկտեմբերի 2019թ. թիվ 36

### ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019Թ.-Ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներով՝ Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ազնվաձոր համայնքի ավագանու 2019թ.-ի դեկտեմբերի 27-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը,աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի կամավոր խնդիրները ,դրանց լուծծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին:
3. Հանձնաժողով կազմելու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի 2020թ-ի բյուջեն հաստատելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքում 2020թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
6. ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանու անդամ Վասիլի Խաչատուրի Անտոնյանի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
7. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հովակիմյան Նվեր | | | |
| Դավթյան Սեյրան | | | |
| Բարխուդարյան Մառլեն | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 դեկտեմբերի 2019 թ. թիվ 37

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ և 37-րդ հոդվածներով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Ազնվաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ազնվաձոր համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 14-ի <<ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 38 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թ-ի հունվարի 01-ից:

| Ազգանուն, Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Յովակիմյան Նվեր | | | |
| Դավթյան Սեյրան | | | |
| Բարխուդարյան Մաղեն | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն. Հովսեփյան

Հավելված

Ագնվաձոր համայնքի ավագանու

2019 թ. դեկտեմբերի 27 -ի թիվ 37 որոշման

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը-7

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 167.200 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 120.880 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 127.500 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 125.500 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 125.500 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 88.700 |
| Տեխ. Սպասարկման անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 88.700 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 7 | 843.980 |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ազնվաձոր համայնք, գ. Ազնվաձոր, հեռ.(0322)6-03-73
Էլ. փոստ՝ aznvadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«27 » դեկտեմբերի 2019 թվական, 38 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համապատասխան՝ Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ազնվաձոր համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 06 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ազնվաձոր համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 16-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 28 -ից:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հովակիմյան Նվեր | [signature] | | |
| Դավթյան Սեյրան | [signature] | | |
| Բարխուդարյան Մաղեն | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

Գ.Ազնվաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ազնվաձոր համայնք, գ. Ազնվաձոր, հեռ. (0322)6-03-73
էլ. փոստ՝ aznvadzor.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

27 դեկտեմբերի 2019թ. N 39-Ա

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան Ազնվաձոր համայնքի ավագանին

**որոշում է.**

1.Համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Նարեկ Հովսեփյան - համայնքի ղեկավար, հանձնաժողովի նախագահ,
2.Իզաբելլա Ղազարյան-համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
3.Նվեր Հովակիմյան - ավագանու անդամ, հանձնաժողովի քարտուղար,
4. Մառլեն Բարխուդարյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
5. Սեյրան Դավթյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),
6.Կարեն Թումասյան - համայնքի բնակիչ, հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ),

2. Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել դրանք համայնքապետարանի աշխատակազմ մուտքագրվելուց հետո 7–օրյա ժամկետում և հանձնաժողովի եզրակացությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Հովակիմյան Նվեր | | | |
| Դավթյան Սեյրան | | | |
| Բարխուդարյան Մառլեն | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

Գ.Ազնվաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 դեկտեմբերի 2019թ. թիվ 40-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և ղեկավարվելով <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով՝

Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել 2020 թվականի Ազնվաձոր համայնքի բյուջեն
   1.1 Եկամուտների գծով 11.988.580
   վարչական մաս 11.988.580
   ֆոնդային մաս 1.798.000
   ֆոնդայինի հավելուրդ 503.820
   1.2 Ծախսերի գծով 11.988.580
   վարչական մաս 11.988.580
   ֆոնդային մաս 2.301.820
2. Հաստատել Ազնվաձոր համայնքի 2020 թվականի եկամուտներն ըստ առանձին եկամուտների՝ համաձայն հավելված 1 – ի:
3. Հաստատել Ազնվաձոր համայնքի 2020 թվականի բյուջեի հատկացումներն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝համաձայն հավելված թիվ 2 –ի:
4. Հաստատել սույն որոշման 3 – րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորող ծախսատեսակներն, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հավելված թիվ 3 – ի:
5. Հաստատել սույն որոշման 3 և 4 կետերով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորող ծախսերն, ըստ առանձին ծրագրերի՝ համաձայն հավելված թիվ 4 – ի:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Հովակիմյան Նվեր | | | |
| Դավթյան Սեյրան | | | |
| Բարխուդարյան Մաղեն | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

2019թ. դեկտեմբերի

գ. Ազնվաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ազնվաձոր համայնք, գ. Ազնվաձոր, հեռ.(0322)6-03-73
էլ. փոստ՝ aznvadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27» դեկտեմբերի 2019 թ. N 41 -Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ,25 և 37-րդ հոդվածներով՝
Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ազնվաձոր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանու 2018թ-ի դեկտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ազնվաձոր համայնքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները,դրույքաչափերը սահմանելու մասին>>թիվ 39-Ն որոշումը:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Բարխուդարյան Մառլեն | | | |
| Դավթյան Սեյրան | | | |
| Հովակիմյան Նվեր | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2019թ. թիվ 42–Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎԱՍԻԼԻ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՆՏՈՆՅԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով՝

Համայնքի ավագանին որոշում է.

Ազնվաձոր համայնքի ավագանու անդամ Վասիլի Խաչատուրի Անտոնյանի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել՝ մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով ավագանու նիստերի ավելի քան կեսից բացակայելու պատճառով:

| Ազգանուն, Անուն | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Դավթյան Սեյրան | | | |
| Բարխուդարյան Մաղեն | | | |
| Հովակիմյան Նվեր | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն. Հովսեփյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ազնվաձոր համայնք, գ. Ազնվաձոր, հեռ. (0322)6-03-73
էլ. փոստ՝ aznvadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2019 թ. N 43

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 38-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Ազնվաձոր համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումը և համայնքի բյուջեից նրանց ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
| --- | --- | --- | --- |
| Դավթյան Սեյրան | | | |
| Հովակիմյան Նվեր | | | |
| Բարխուդարյան Մաղլեն | | | |

Համայնքի ղեկավար՝ Ն.Հովսեփյան

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանու

**2019** թվականի դեկտեմբերի **27**-ի **N 38**-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Թամարա Կառլենի Թումասյան - 20.000(քսան հազար) ՀՀ դրամ, սոց. օգնություն

ԱԶՆՎԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն.ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Ազնվաձոր համայնքի ավագանու

**2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 38-Ա** որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԶՆՎԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Ալյոշա Ավետիսի Առուշանյան - 30.000(երեսուն հազար) ՀՀ դրամ, սոց. օգնություն

ԱԶՆՎԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն.ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Ա. Առուշանյանի դիմումը սոցիալական օգնության տրամադրելու մասին և տնայցի միջոցով ուսումնասիրելով նրա սոցիալական պայմանները՝ հանձնաժողովը որոշեց, որ Ա. Արուշանյանը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում և դրամական աջակցության կարիք ունի:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Հովսեփյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ի. Ղազարյան

Խորհրդի քարտուղար՝ Ն.Հովակիմյան

Խորհրդի անդամներ՝ Մ.Բարխուդարյան

Կ. Թումասյան

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով Թ.Թումասյանի դիմումը սոցիալական օգնության տրամադրելու մասին և տնայցի միջոցով ուսումնասիրելով նրա սոցիալական պայմանները՝ հանձնաժողովը որոշեց, որ Թ.Թումասյանը գտնվում է սոցիալապես անապահով վիճակում և դրամական աջակցության կարիք ունի:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ն. Հովսեփյան |
| Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ | Ի. Ղազարյան |
| Խորհրդի քարտուղար՝ | Ն.Հովակիմյան |
| Խորհրդի անդամներ՝ | Մ.Բարխուդարյան |
| | Կ. Թումասյան |